ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 125-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10-Ը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 10-ը սեպտեմբերի 2024 թվականի թիվ 12 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 10.09.2024թվականի թիվ 12 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացիների և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին:

3. Արենի համայնքի ավագանու 12.12.2024թվականի թիվ 155-Ա որոշման հավելված 1-ում և 16.07.2024թվականի թիվ 077-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4. Արենի համայնքի ավագանու 25.01.2024թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2024թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

5. Արենի համայնքի Չիվա բնակավայրի բնակիչ Խաչիկ Պողոսյանի դիմումը քննարկելու և գույքահարկի արտոնություն տրամադրելու մասին:

6. Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական աջակցություն ցուցաբերելու և մանկապարտեզի ծնողական վճարներից զեղչելու մասին: